ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Բեկուր Չախմախչյան
Վահագն Մկրտչյան

Ներածություն

Ժամանակակից պետությունների համար պարենային անվտանգություն հասկացությունն ունի բազմաթիվ բաղադրիչներ, որոնք, թերևս, պակաս կարևոր չեն, քան ռազմական անվտանգությունը: Ընդ որում, պարենով ապահովվածությունը ողջ հասարակության, ինչպես նաև դրա ռազմական համակարգի կենսունակության հիմքն է: Պատահական չէ, որ ինչպես ներկայացնում ենք ստորև, պարենային անվտանգության ու շուկայական մեխանիզմների միջև ընտրություն կատարելիս շատ հաճախ նախապատվությունը տրվում է առաջինին:

Դրանք առավել սրությամբ դրված են անբարենպաստ կլիմայական պայմաններ ունեցող կամ սակավահող երկրների առջև: Քանի որ բնակչության բարձր խտությունը և սակավահողությունը թույլ չեն տալիս Հայաստանին սեփական ռեսուրսների հաշվին պարենային տեսակետից լինել ինքնապահովված երկիր, մեզ համար պարենային անվտանգության խնդիրների հաջող լուծումը խիստ արդիական է:

Սույն հոդվածում, չհավակնելով խնդրի լրիվ ու վերջնական լուծմանը, ինչպես նաև «անհայտ» դեղատոմսերի բացահայտմանը, մենք փորձել ենք ամփոփ և

ամբողջական ձևով լուսաբանել մեր տեսանկյունն ու մոտեցումները պարենային անվտանգության հիմնահարցերի վերաբերյալ:

Ընդհանուր մոտեցման գործոնները

Ցանկացած երկրի ռազմավարական հիմնախնդիրների մեջ իրենց տեղն ունեն անվտանգության և դրա բաղկացուցիչների լուծվածության հարցերը: Տվյալ դեպքում մենք նկատի ունենք անվտանգության այնպիսի բաղկացուցիչ, ինչպիսին է պարենային անվտանգությունը: Իբրև անվտանգության գործոն՝ դրա կարևորությունը սերտորեն շաղկապվում է երկրի սոցիալ-տնտեսական կայունության և տնտեսական քաղաքականության հետ:

Բնականաբար, ամեն երկրում այն ունի իր առանձնահատկությունները, լուծվածության աստիճանը և ուղիները: Չնայած իրարից տարբերվող մոտեցումներին, 1997թ. 112 երկրների ղեկավարներ եկել են համաձայնության պարենային անվտանգության հետևյալ ձևակերպման շուրջ. «Պարենային անվտանգությունն ապահովված է այն դեպքում, երբ բոլոր մարդիկ մշտապես ունեն ֆիզիկական և տնտեսական հնարավորություն, իրենց նախապատվությունների համաձայն, անհրաժեշտ քանակի ու որակի անվտանգ, սննդարար պարենամթերք ձեռք բերելու, ակտիվ և առողջ կյանք վարելու համար» [1]:

Այս սահմանումը, միավորելով գյուղատնտեսական արտադրությունը, առևտուրը և սպառումը, կարծես լուծում է բոլոր խնդիրները: Առ այսօր, սակայն, չեն դադարում թեժ վիճաբանությունները ներմուծող և արտահանող երկրների միջև: Առարկայական լինելու համար բերենք մեկ-երկու օրինակ, որոնք բավականաչափ խոսուն են նրանց դիրքորոշումների բնութագրման տեսակետից:

Օրինակ՝ Ճապոնիայի կառավարության դիրքորոշումը գյուղատնտեսական մթերքների ներմուծումից բացահայտ կախվածության վերաբերյալ, որն արտա-

հայտված էր Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ) հղված նամակի մեջ, կարելի է ի մի բերել հետևյալ դիտարկումներով.

1. Կարճ ժամանակում համաշխարհային շուկայի ապահովվածությունը սննդամթերքներով կարող է դառնալ անկայուն և նույնիսկ կրճատվել միջնաժամկետ հեռանկարում:
2. Ընդհանուր առմամբ պարենային շուկան անկայուն է, քանի որ երկրները արտահանում են սեփական գյուղատնտեսական արտադրանքի համեմատաբար փոքր մասը, իսկ հիմնական գյուղատնտեսական մթերքներն ընդհանրապես արտահանվում են միայն մի քանի երկրների կողմից:
3. Եթե սննդամթերքների պակասի ժամանակ տնտեսապես հզոր երկիրը սկսի պարեն գնել, ապա դա կունենա բացասական հետևանքներ համաշխարհային շուկայի համար:

Ավելին, նամակում շեշտվում է, որ «ելնելով գյուղատնտեսական նախկին համաձայնագրերի իրացման փորձից՝ անհրաժեշտ է նաև մանրամասնորեն ուսումնասիրել, թե քաղաքական ինտերվենցիան ինչպիսի տեղ կունենա միջազգային համաձայնագրերում, որքանով է թույլատրված դրա օգտագործումը» [2]:

Ճապոնիայի դիրքորոշմանը մոտ է նաև Նորվեգիայի կառավարության մոտեցումը, համաձայն որի՝ պարենային անվտանգությունը, որպես հասարակական բարիք, կարող է պահանջել սատարման զգալի մակարդակ: Ընդ որում, ոչ առևտրական այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ պարենային անվտանգությունը, գյուղատնտեսական շրջանների կենսունակությունը և շրջակա միջավայրի պահպանությունը, հասարակական բարիքներ են, որոնք չունեն շուկա: Այդ հասարակական բարիքների ապահովումը կարող է պահանջել պետության օգնությունը, որն, իր հերթին, կարող է ունենալ հեռու գնացող հետևանքներ՝ ընդունակ ազդելու ինչպես ներքին գյուղատնտեսական քաղաքականության ձևավորման, այնպես և միջպետական առևտրի համակարգի վրա [3]: Նշված աղբյուրում եզրակացվում է, որ

«շահագրգռվածությունը սեփական պարենային անվտանգության մեջ հանդիսանում է ցանկացած պետության օրինական ցանկությունը: Դրա հետ մեկտեղ առաջանում է հատուկ քաղաքական միջոցառումների անհրաժեշտություն՝ կապված ցանքատարածությունների ու ներքին արտադրության պաշտպանության, ագարակատերերի բավական մեծ ընկերակցության պահպանման և արտադրության ապակենտրոնացման հետ»:

Նման դիրքորոշմանն ի պատասխան, ԱՄՆ-ը, Ավստրալիան և գյուղմթերքներ արտահանող մյուս երկրները ներմուծող երկրներին մեղադրում են միջազգային պարտավորություններից խուսափելու մեջ, որոնց համաձայն՝ նրանք պետք է նվազեցնեն գյուղատնտեսության աջակցությունը, ինչն, իր հերթին, հղի է բացասական սոցիալական հետևանքներ ունեցող կառուցվածքային փոփոխություններով: Փաստորեն, չկարողանալով տնտեսապես հիմնավորել իրենց մոտեցումները՝ արտահանող երկրները դրանք փոխարինում են քաղաքական փաստարկներով:

Ի վերջո, արտահանող երկրների դիրքորոշումը հանգում է հետևյալին: Ներմուծող երկրների համար շատ ավելի արդյունավետ է իրենց ջանքերն ուղղել գյուղատնտեսությունում կառուցվածքային փոփոխությունների հետևանքով առաջացած բացասական երևույթների մեղմմանն ու տնտեսության այն ճյուղերին, որոնցում նրանք հարաբերական առավելություն ունեն: Հակառակ դեպքում կաղավաղվի միջազգային պարենային շուկայի իրավիճակը, ինչը բացասաբար կանդրադառնա արտահանող երկրների գյուղատնտեսական արտադրության արդյունավետության վրա: Իսկ դա էլ բացասաբար կազդի ներմուծող երկրների պարենային անվտանգության վրա: Ամեն դեպքում, նրանք պետք է որոշակի քանակի սննդամթերք ներմուծեն, և, հետևաբար, արտահանող երկրների գյուղատնտեսության արդյունավետության բարձրացումը նույնպես բխում է իրենց շահերից: Ինչ վերաբերում է հասարակական բարիքներին, ապա դրանք ապահովելու համար կան գյուղատնտեսության հետ չկապված բազմաթիվ այլ քաղաքական ու տնտեսական լծակներ:

Հետաքրքրական է այն հանգամանքը, որ չնայած պարենային անվտանգության բավական հստակ և ըմբռնելի սահմանմանը, գործնականում տարբեր երկրների դիրքորոշումները հակադիր են ու ակնհայտորեն բխում են ոչ այնքան շուկայական տնտեսության, որքան սեփական արտադրության հաշվին իրենց պարենային անվտանգությունն ապահովելու շահերից: Միատարր չեն նաև խաղի կանոնները տարբեր միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ նաև ԱՀԿ շրջանակներում: Այստեղ շատ բան կախված է երկրի շահերի ճիշտ ըմբռնումից ու պաշտպանությունից:

Պարենային անվտանգության հիմնախնդիրներին առնչվող իրողություններն ավելի ճիշտ ընկալելու համար մի փոքր անդրադարձ կատարենք գյուղմթերքների արտադրության զարգացման համաշխարհային միտումներին: Ահա թե ինչ են այդ կապակցությամբ գրում Կ.Գրիգորյանը և Ա.Սանասարյանը. «...Աշխարհը թևակոխում է բնակչության մեկ շնչի հաշվով պարենամթերքի արտադրության և սպառման նվազման տևական շրջան: Աշխարհի բնակչության տարեկան 80-90 մլն աճը գերազանցում է պարենամթերքի աճի տեմպերը... 1985-1995թթ. պարենամթերքի 125 մլն տ միջին տարեկան աճի դիմաց 2005-2030թթ. միջին տարեկան աճը կկազմի ընդամենը 9 մլն տ» [4, էջ 31]:

Այլ խոսքով՝ ընդամենը 10-15 տարի հետո աշխարհում արտադրվող սննդամթերքների ծավալն ուղղակի ֆիզիկապես չի բավարարի բնակչության պահանջարկը: Ոչ հեռու ապագայում ակնկալվող հոռետեսական իրականությունը զգոնացնում է բոլոր երկրներին և, կարծում ենք, լույս է սփռում այն հանգամանքի վրա, թե իրականում որոնք են նրանց դիրքորոշումների շարժառիթները: Այս տեսանկյունից ավելի ըմբռնելի է դառնում Ճապոնիայի ուղերձում ուղղակիորեն արտահայտված՝ պարենամթերքը քաղաքական զենքի վերածելու անհանգստությունը:

Ի դեպ, նույն հեղինակները տալիս են պարենային անվտանգության այլ, «հանրապետական» սահմանում, որի էությունը հետևյալն է. անկախ համաշխար-

հային շուկայի իրավիճակից, անհրաժեշտ է ապահովել սննդամթերքների մատչելիությունը մեր հանրապետության բոլոր սոցիալական խավերի համար:

Պետք է ասել, որ ընդհանրապես բնակչության մեկ շնչի հաշվով բոլոր տեսակի ռեսուրսների նվազումը, թեև բացասական, բայց անխուսափելի երևույթ է՝ կապված ինչպես այդ ռեսուրսների սպառման, այնպես էլ բնակչության աճի հետ: Ինչ վերաբերում է գյուղմթերքների արտադրության աճի սահմանափակմանը, ապա դա բացատրվում է մշակաբույսերի բերքատվության և կենդանիների մթերատվության բարձրացման հնարավորությունների նվազմամբ, ինչպես նաև բնակչության աճի, շինարարական, ռեկրեացիոն, կոմունիկացիոն պահանջների, հողօտարման ու այլ գործոնների հետևանքով գյուղատնտեսական նշանակության հողատարածքների թե՛ բացարձակ, թե՛ հարաբերական (մեկ շնչի հաշվով) ցուցանիշներով կրճատմամբ:

Կցանկանայինք, սակայն, որ չստեղծվի թյուր կարծիք, թե գյուղմթերքներ արտահանող երկրներում գյուղատնտեսությունը թողնված է միայն շուկայական մեխանիզմների կարգավորման հույսին: Պետական աջակցությունը գյուղմթերքների արտադրության որոշակի կարգավորմանն ու իրացմանը գոյություն ունի գործնականում բոլոր երկրներում: Բնականաբար, արտահանող երկրներում այն անհամեմատ փոքր է: Այսպես՝ 1994թ. արտադրված գյուղատնտեսական արտադրանքի համեմատ, պետական աջակցությունը ամենափոքրը եղել է Նոր Զելանդիայում (3%), Ավստրալիայում (10%), ԱՄՆ-ում (21%) և Կանադայում (27%): Ընդ որում, այս ցուցանիշները հաստատուն թվեր չեն: Օրինակ՝ 1998թ. ԱՄՆ-ում այդ նույն ցուցանիշը կազմել է 25%: Ավելացնենք, որ պետական աջակցության գումարների զգալի մասը ուղղակիորեն ուղղվել է գյուղմթերքների շուկայական գների պահպանմանը: Ըստ վերը բերված երկրների՝ այն կազմել էր համապատասխանաբար՝ 37%, 54%, 49% և 52%:

Նման կառուցվածք ունի նաև ներմուծող երկրների հովանավորչական քաղաքականությունը, սակայն այն տարբերությամբ, որ նրանք իրականացնում են նաև գյուղմթերքների արտադրության ուղղակի օժանդակություն (ինչն արգելված է ԱՀԿ կողմից): Ի դեպ, նրանց օգնության չափերը անհամեմատ մեծ են: «Առաջատարները» Նորվեգիան և Ճապոնիան են, որտեղ պետական աջակցությունը տատանվում է 75–80%-ի սահմաններում: Եվրամիությունում այն կազմում է շուրջ 50% և այլն [5, էջ 86-88]:

Ի մի բերելով շարադրվածը՝ համոզվում ենք, որ յուրաքանչյուր երկիր, կարգավորելով ագրարային ոլորտը, պետք է լրջագույն ուշադրություն դարձնի պարենային անվտանգության այն գործոններին, որոնք էական են իր պայմանների համար: Ներկայիս Հայաստանի համար թերևս ամենաբարդ ու խրթին հանգույցը բնակչության ցածր գնողունակությունն է:

Հիմնական պարենամթերքների սպառման մակարդակը ՀՀ-ում

Երկրի պարենային ապահովվածության կարևորագույն ցուցանիշներն են բնակչության մեկ շնչի ապահովվածությունը սննդամթերքներով և դրանց սպառման մակարդակը: Առանձնացվում է սպառման երեք մակարդակ՝ 2500-3500 կկալ. բավարար, 1500-2500 կկալ. անբավարար և 1500 կկալ.-ից ցածր, որի դեպքում կյանքի տևողությունը կրճատվում է երկու անգամ: Ընդ որում, օրական 2150 կկալ.-ից ցածրը քաղցի շեմն է [4, էջ 31]: ՀՀ առողջապահության նախարարության կողմից էներգետիկ նվազագույն օրաբաժինը ներկայում սահմանված է՝ 2412 կկալ. չափով [6, էջ 56]: Ըստ էության, դա պարենային «նվազագույն զամբյուղն է»:

Պետք է նշել, որ պրոֆ. Ս.Ավետիսյանի տվյալներով, մեկ շնչի փաստացի սպառումը մեր երկրում 1990թ. կազմել է 2420 կկալ., 1993թ.՝ 1669 կկալ., 1999թ.՝ 1996 կկալ. և 2001թ.՝ 2040 կկալ. [7, էջ 226]: Ինչպես տեսնում ենք, չնայած նշված դրական տեղաշարժերին՝ ակնհայտորեն կապված տնտեսության որոշ աշխուժաց-

ման հետ, այն, ցավոք, չի գերազանցել քաղցի շեմը: Այլ խոսքով՝ հանրապետության միջին քաղաքացին այսօր կա՛մ թերսնվում է, կա՛մ մոտ է այդ սահմանագծին:

Խորհրդային տարիներին ԽՍՀՄ Բժշկական գիտությունների ակադեմիայի սննդի ինստիտուտի կողմից յուրաքանչյուր հանրապետության համար մշակված էին երաշխավորված ֆիզիոլոգիական նորմեր, որոնցում մթերքների քանակական կազմը հաշվեկշռված էր ըստ սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի, վիտամինների և միկրոտարրերի: Այս նորմերը՝ ըստ հիմնական սննդամթերքների, բերված են աղյուսակ 1-ի երկրորդ սյունակում: 1997-2001թթ. հաշվարկներում մեր հանրապետության բնակչության թվաքանակի միջինն ընդունված է 2.65 մլն մարդ): Հայաստանի համար ռացիոնալ է համարվել 2815 կկալ. օրաբաժնի էներգետիկ արժեքը [8, էջ 24]: Ընդ որում, սննդամթերքների էներգետիկ նորմի ընդհանուր բաղադրության 73%-ը պետք է ապահովվի բուսական ծագում ունեցող մթերքների հաշվին, իսկ 27%-ը՝ կենդանական: Կարևոր ենք համարում ընդգծել նշված համամասնության պահպանման անհրաժեշտությունը, հատկապես մարդկանց տարբեր հիվանդությունների կանխարգելման առումով: Մինչև 1990թ. այս համամասնությունը հիմնականում պահպանվում էր: Այնուհետև, սակայն, բուսական ծագում ունեցող մթերքների բաժինը զգալիորեն բարձրացավ և հասավ 84%-ի [9, էջ 17-19]:

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, այժմ էլ ֆիզիոլոգիական նորմի համեմատ, սպառման ընդհանուր անբավարար մակարդակի ֆոնի վրա, հացամթերքն ու կարտոֆիլը գերազանցում են այն համապատասխանաբար՝ 38 և 69%-ով: Միևնույն ժամանակ խիստ մտահոգիչ է սպառման անբավարար մակարդակը այնպիսի կարևորագույն պարենամթերքների գծով, ինչպիսիք են՝ մսամթերքը, կաթնամթերքը, բուսական յուղը, միրգը (վերջինս մասամբ կապված է բազմամյա տնկարկների տարածության շուրջ 2.5 անգամ նվազեցման հետ): Ինչ վերաբերում է «նվազագույն զամբյուղի» հաշվարկում շաքարի սպառման ավելցուկին, ապա դա, թերևս,

բացատրվում է մարդու ֆիզիոլոգիական տեսակետից ավելի գերադասելի մրգի և խաղողի թերսպառմամբ, իսկ բանջարեղենի բավարար քանակը՝ նաև վերջին տարիներին վերամշակող ձեռնարկությունների գործունեության աշխուժացմամբ, որի արտադրանքի մի մասն էլ արտահանվում է (տե՛ս աղյուսակ 2-ը, ուր օգտագործվել են ՀՀ վիճակագրական և մաքսային ծառայությունների տվյալները):

Աղյուսակ 1. Մեկ շնչի հաշվով հիմնական սննդամթերքների սպառման քանակը ՀՀ-ում. 1997- 2001թթ.

Սննդամթերքի անվանումը	Սննդի ֆիզիոլո-գիական նորմը	Նույնը ըստ «նվազագույն զամբյուղի»	Փաստացի սպառումը	%-ներով	
				Նորմի նկատմամբ	«Նվազագույն զամբյուղի» նկատմամբ
Հաց, հացամթերք	128,0	129,6	177,0	138,3	136,6
Միս, մսամթերք	75,0	36,5	28,2	37,6	77,3
Կաթնամթերք (վերածած կաթի)	392,0	295,0	194,0	49,5	65,8
Կարտոֆիլ	58,0	91,3	98,0	169,0	107,3
Բանջարեղեն	141,0	109,5	130,0	92,2	118,7
Մրգեղեն	92,0	73,0	61,0	66,3	83,6
Շաքար	34,5	18,3	25,3	73,3	138,3
Բուսական յուղ	7,7	11,0	5,9	76,6	53,9
Ձու (հատ)	251	182	107	42,6	58,6

Վերջապես չպետք է մոռանալ, որ աղյուսակ 1-ը կառուցված է ողջ բնակչության կողմից սննդամթերքների հավասարաչափ սպառման սկզբունքով: Ըստ ամենայնի, սակայն, բնակչության ապահովված 25-30%-ը սնվում է ֆիզիոլոգիական բավարար մակարդակով՝ իր օրաբաժնում ապահովելով և՛ անհրաժեշտ կալորիականությունը, և՛ սննդամթերքների քանակն ու տեսականին: Իսկ դա բնակչության

մնացած մասի համար ենթադրում է օրաբաժնի ավելի վատ կառուցվածք և նրա կարևորագույն ցուցանիշների ցածր մակարդակ,: Ավելացնենք, որ նախնական տվյալներով, չնայած դրական միտումներին, հետագա երկու տարիների ընթացքում սպառման մակարդակում բեկումնային տեղաշարժեր չեն եղել:

Այսպիսով, պարենային մթերքների սպառումը հանրապետությունում անհավասարակշռված է, որի խրոնիկական բնույթը չի կարող բացասաբար չանդրադառնալ մարդկանց առողջության և կենսագործունեության վրա:

Պարենային ինքնապահովման և ապահովման մակարդակը ՀՀ-ում

Հայտնի է, որ Հայաստանի տարածքային, բնակլիմայական ու տնտեսական առանձնահատկությունները թույլ չեն տալիս սեփական արտադրության հաշվին ապահովել բնակչության պահանջարկն այնպիսի կարևոր սննդամթերքների գծով, ինչպիսիք են՝ հացահատիկը, միսը, կաթը, շաքարը, բուսական յուղերն ու հավկիթը: Դրանց պակասը, ինչպես նախկինում, այնպես էլ այժմ լրացվում է ներմուծման հաշվին: Փոխարենը, խորհրդային տարիներին ավելցուկային էր համարվում՝ բանջարեղենի, կարտոֆիլի, մրգի ու խաղողի արտադրությունը, որոնք մեծ քանակությամբ արտահանվում էին ինչպես թարմ, այնպես էլ վերամշակված վիճակում: Պատկերն ամբողջացնելու համար այստեղ կներկայացնենք հիմնական սննդամթերքների անվանացանկի այժմ ձևավորված վիճակը՝ հաշվի առնելով տեղական արտադրության, ներմուծման և արտահանման հանրագումարը:

Վերապահենք, որ այս հարցի պարզաբանումը նույնպես կապված է բնակչության այն թվաքանակի հետ, որի համար հաշվարկվում է պարենային ապահովվածությունը: Հանրապետությունում տեղի ունեցող միգրացիոն գործընթացները, ճոճանակային միգրացիան և ծննդաբերության ցածր մակարդակը մասնագետների շրջանում առաջացնում են զգալի տարաձայնություններ ներկա և կանխատեսվող բնակչության թվաքանակի շուրջ: Հիմնվելով նրանց գնահատականների վրա՝ մենք

աղյուսակ 1-ում որոշել էինք բնակչության հավանական թվաքանակը: Այժմ հնարավորություն ունենք հիմնվելու նաև 2002թ. մարդահամարի տվյալների վրա, ըստ որի՝ առկա բնաչության քանակը կազմում է 3.003 մլն մարդ [11, էջ 213]:

Մեկնաբանելով աղյուսակ 2-ում բերված տվյալները՝ նախ պետք է ասել, որ ոչ միայն ցորենը, այլև հացահատիկայինների մնացած տեսակները (գարի, տարեկան և այլն) օգտագործվում են նաև անասնակերերի, գարեջրի, սպիրտի արտադրության համար և որոշ քանակ էլ պահպանվում է որպես սերմացու: Խորհրդային տարիներին հանրապետությունում նույնպես արտադրվում էր շուրջ 300 հազ. տ հացահատիկային, սակայն դրա ընդհանուր պահանջարկը կազմում էր 1.5 մլն տ: Այսինքն, 1.2 մլն տ ներմուծվում էր ցորենի, խտացրած կերերի և այլնի տեսքով: Այլ կերպ ասած՝ միայն պարենային հացահատիկի կարիքը չէ, որ արտահայտում է նրա անխուսափելի ընդհանուր պահանջարկը: Հացամթերքի ներմուծման այժմյան ցածր մակարդակը մենք հակված ենք հիմնականում բացատրել նրանով, որ խտացրած կերեր գործնականում չեն ներմուծվում:

Այսօր հանրապետության վաճառասեղաններին կա ցանկացած տեսակի սննդամթերք: Դա վերաբերում է նաև մսին ու մսամթերքին: Աղյուսակ 2-ի տվյալներից, սակայն, երևում է, որ նրա առատությունը թվացյալ է, քանի որ իրականում առկա մսամթերքն ավելի քան երեք անգամ պակաս է ֆիզիոլոգիական նորմից ու մոտ երկու անգամ՝ «նվազագույն զամբյուղի» մակարդակից: Ընդ որում՝ տեղական արտադրանքը կազմում է առկա մսամթերքի 69.4%-ը: Նույն պատկերն է նաև կաթնամթերքի, մրգի, բուսական յուղի ու ձվի պարագայում, որոնք պակաս են ֆիզիոլոգիական նորմից և զգալիորեն զիջում են «նվազագույն զամբյուղի» մակարդակին:

Չխորանալով տարբեր ենթաճյուղերի տեխնոլոգիական առանձնահատկությունների մեջ՝ բերված տվյալներում պետք է հաշվառել նաև արտադրական ծախսերը: Նրանք հատկապես մեծ են կարտոֆիլագործության բնագավառում, որտեղ

միայն սերմացուի համար առանձնացվում է համախառն արտադրանքի մոտ 30%-ը: Նմանատիպ խնդիր կա նաև կաթնամթերքի արտադրությունում:

Աղյուսակ 2. Հիմնական սննդամթերքների պահանջարկը և առկա ծավալը ՀՀ-ում 2002թ. (1000 տ)

Սննդամթերք-ների անվանումը	Սննդի ֆիզի-ոլոգի-ական նորմը	Նույնը ըստ «նվա-զա-գույն զամ-բյուղի»	Արտադր-ված է հանրապե-տությունում (2002թ.)	Ներմուծ-ված է հանրապե-տություն	Արտա-հանված է հանրա-պետու-թյունից	Ընդա-մենը	%-ներով՝ ընդամենի մեջ	
							Տեղա-կան արտա-դրանք	Ներ-մու-ծում
Հաց, հացամթերք	384,0	388,8	284,7	378,8	0,2	663,3	42,9	57,1
Միս, մսամթերք	225,0	109,5	47,5	20,9	0,038	68,4	69,4	30,6
Կաթնամթերք	1176,0	885,0	462,7	76,2	0,8	538,1	85,9	14,1
Կարտոֆիլ	174,0	273,9	316,9	-	-	316,9	100	-
Բանջարեղեն	423,0	328,5	434,2	6,2	5,4	435,0	98,6	1,4
Մրգեղեն	276,0	219,0	102,4	3,9	0,4	105,9	96,3	3,7
Շաքար	103,5	54,9	-	68,4	-	68,4	-	100
Բուսական յուղ	23,1	33,0	1,5	11,9	-	13,4	11,2	88,8
Ձու (մլն հատ)	753,0	546,0	224,4	0,5	0,062	224,9	99,7	0,3

Չխորանալով տարբեր ենթաճյուղերի տեխնոլոգիական առանձնահատկությունների մեջ՝ բերված տվյալներում պետք է հաշվառել նաև արտադրական ծախսերը: Նրանք հատկապես մեծ են կարտոֆիլագործության բնագավառում, որտեղ միայն սերմացուի համար առանձնացվում է համախառն արտադրանքի մոտ 30%-ը: Նմանատիպ խնդիր կա նաև կաթնամթերքի արտադրությունում:

Պետք է ասել, որ հանրապետությունում հաճախակի են դարձել շաքարի արտադրության վերականգնման մասին խոսակցությունները: Ինչպես ցույց է տվել նախկին փորձը, տեղական արտադրության հաշվին հնարավոր չէ բավարարել հանրապետության ողջ պահանջարկը: Այն միայն ունակ է որոշ չափով մեղմելու այսօրվա հարյուրտոկոսանոց կախվածությունը ներմուծումից: Կարծում ենք, որ այս հարցն ունի մանրակրկիտ ուսումնասիրման անհրաժեշտություն՝ ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական տեսանկյունից: Մյուս կողմից՝ պտղի ար-

տադրության առումով մեր հնարավորությունները լիովին բավարար են բնակչության կարիքներն ամբողջական կամ դրան մոտ մակարդակով ապահովելու համար: Այստեղ բնական է տեղական արտադրանքի ճնշող գերակշռությունը (96%), սակայն ներկայում նրա ընդհանուր ծավալն էլ երկու անգամ պակաս է նորմից:

Դրական են բուսական յուղի արտադրության որոշ չափով վերականգնման փաստը և դրա արտադրության ավելացման միտումը (2003թ. նախնական տվյալներով արտադրվել է մոտ 2.0 հազ. տ արտադրանք): Ցավոք, այն դեռ հեռու է բավարար համարվելուց, և ներմուծման 88.8% կազմող մակարդակը պատահական չէ: Ինչ վերաբերում է հավկիթին, ապա դրա արտադրանքի վերջին տարիների կտրուկ աճը զոհացուցիչ հանգամանք է, սակայն այն դեռ 3.4 անգամ պակաս է բնակչության պահանջարկից:

Ընդհանուր առմամբ, աղյուսակ 2-ից ընդգծված կերպով երևում են հանրապետությունում առկա սննդամթերքների անբավարար ծավալները: Տեղական արտադրանքի և ներմուծման հաշվին դրանց մակարդակի ցանկալի աճը հիմնականում արգելակվում է բնակչության ցածր գնողունակության, հողօգտագործման անբավարար արդյունավետության պատճառով:

Արդի հողօգտագործումը

Հայաստանում 1991թ. իրականացված արմատական բարեփոխումների հետևանքով ստեղծվեց հողային հարաբերությունների նոր համակարգ: Գյուղատնտեսությունում բարեփոխումների նպատակը՝ մասնավոր հողատերերի դասի ստեղծման միջոցով, հողօգտագործման արդյունավետության բարձրացումն էր: Հողի մասնավոր սեփականության հենքի վրա ձևավորվեց շուրջ 330 հազ. Գյուղացիական տնտեսություն[1], որոնց այժմ պատկանում են գյուղատնտեսական նշանա-

[1] Այստեղ և ստորև օգտագործված են ՀՀ վիճակագրական ծառայության տվյալները [12]:

կության գրեթե ողջ հողահանդակները (բացառությամբ արոտների) և անասնագլխաքանակը:

Այսօր կարելի է փաստել, որ արդյունքը ստացվեց ճիշտ հակառակը: Այսպես, ներկայում հանրապետությունում չի օգտագործվում շուրջ 200 հազ. հա վարելահող կամ դրանց ընդհանուր քանակի մոտ 40%-ը: 1980-ական թթ. համեմատ, մոտ 30 և 18 հազ. հա-ով պակասել են բազմամյա տնկարկներն ու խաղողի այգիները, ինչը կազմում է նրանց ընդհանուր տարածքի համապատասխանաբար՝ 60 և 52%-ը: Այս փոփոխությունների արդյունքում՝ հանրապետությունում այլևս չի արտադրվում ավելցուկային պտուղ, զգալիորեն նվազել են պտղի ու խաղողի նման բարձրարժեք կուլտուրաների հետագա վերամշակման ու արտահանման հնարավորությունները:

Էական փոփոխություններ են կատարվել նաև ցանքատարածությունների կառուցվածքում: Չնայած դրանց ընդհանուր մակերեսի կրճատմանը, 40-45 հազ. հա-ով ավելացել են հացահատիկայինների, 8.0 հազ. հա-ով՝ կարտոֆիլի, 2.0 հազ. հա-ով՝ բանջարեղենի տարածությունները (այս փոփոխությունները հիմնականում կատարվել են կերային ցանքատարածությունների հաշվին, որոնք պակասել են 190 հազ. հա-ով): Ընդ որում, մեկ հեկտարի միջին բերքատվության անկման արդյունքում այդ մշակաբույսերից ներկայում ստացվող համախառն բերքը էականորեն չի տարբերվում 1980-ական թվականներին ստացվող համախառն բերքի քանակից:

Չնավորված իրավիճակն ուրվագծում է գյուղացիական տնտեսությունների ձգտումը՝ առաջին հերթին ապահովել իր ընտանիքի կարիքները՝ վարելով նաև նույն նպատակին միտված, էքստենսիվ անասնապահություն: Որքան բնական է գյուղացու ցանկությունը, այնքան էլ դա ընդգծում է գյուղացիական տնտեսությունների բնամթերային, ոչ ապրանքային բնույթը: Այսինքն՝ գյուղմթերքների արտադրության ոչ շուկայական ուղղվածությունը:

Այսպիսով, ակնհայտ է կերային մշակաբույսերի, բազմամյա տնկարկների և խաղողի այգիների հաշվին առաջին անհրաժեշտության պարենային մշակաբույ-

սերի տարածությունների ավելացումը՝ կենտրոնացնելով դրանց արտադրությունն առավել նպատակահարմար հողամասերում, հրաժարվելով ցածր բերրիությամբ, մասնատված, թեք լանջերում տեղաբաշխված հողակտորներից, որոնք արդեն անցել են խոպանացած հողերի շարքը:

Վերջին տարիներին կան դրական տեղաշարժեր՝ կապված վերամշակող ձեռնարկությունների աշխատանքի որոշ աշխուժացման հետ, ինչով և հակված ենք բացատրելու բանջարային մշակաբույսերի տարածությունների ավելացումը: Ընդհանուր պատկերը, սակայն, մտահոգիչ է:

Տակավին առկա է ինտենսիվ, գրագետ հողօգտագործումը խոչընդոտող այնպիսի օբյեկտիվ գործոն, ինչպիսին է հողերի մանրատվածությունը և մասնատվածությունը: Խնդիրն այն է, որ հողը, հանդիսանալով գյուղատնտեսական արտադրության վարման գլխավոր արտադրամիջոց, արդյունավետ և ռացիոնալ արտադրության կազմակերպման համար ենթադրում է մշակվող հողատարածքի որոշակի՝ նվազագույն չափեր: Դրանք տարբեր են տարբեր բնատնտեսական գոտիների (որոնք Հայաստանում 15-ն են), գյուղատնտեսության վարման համակարգերի և մակարդակների համար: Հողը մանրատելով 1.2 մլն հողակտորի ու բաժանելով 330 հազ. Գյուղացիական տնտեսությունների միջև՝ բնականաբար, ստացվել են ռացիոնալ հողօգտագործումը բացառող փոքր հողակտորներ: Դրան գումարվում է մի ընտանիքի՝ իրարից զգալի հեռավորության վրա մի քանի հողակտոր ունենալու փաստը: Այսօր գյուղացիական տնտեսություններն ունեն 3-4 հողակտոր, որոնց միջին չափերը տատանվում են 1.4 հա շուրջ, որից էլ մոտ մեկ հեկտարը վարելահող է:

Պետք է ասել, որ հողակտորների խոշորացումը հողի շուկայի և կոոպերացիայի միջոցով, երկարատև գործընթաց է՝ կապված համայնքներում կամ նրանցից ոչ հեռու գործող ձեռնարկությունների և նրանցում աշխատուժի պահանջարկի առկայության հետ: Էական նշանակություն ունեն նաև իրավական, տնտեսական դաշտերի կատարելագործումը, հանրապետության բարոյահոգեբանական մթնոլորտի

փոփոխությունը: Սակայն, ի վերջո, միայն խոշոր տնտեսությունների ստեղծումն է հանդիսանում անհատական կամ կոլեկտիվ հողօգտագործման բարելավման նախապայման:

Երկրորդ կարևորագույն նախապայմանը ոռոգումն է: Այժմ ոռոգվում է շուրջ 150 հազ. հա հողատարածք, որը կազմում է նախկինում ոռոգվող տարածքների մոտ կեսը: Ի դեպ, ոռոգվող տարածքների իրական քանակը ոչ ոք չի կարող հաստատել, քանի որ ջրատնտեսական մարմինները վեր են ածվել առևտրական կազմակերպությունների, որոնք գիտեն, թե որքան ջուր է բաց թողնվել և որքան վարձ են ստացել դրա դիմաց: Իսկ թե որքան տարածություն է իրականում ոռոգվել, նրանք չեն հաշվառում [14, էջ 25]:

Պետք է ասել, որ այսօր ոռոգման համակարգը ոչ մի պատասխանատվություն չի կրում ո՛չ ոռոգման ժամկետների խախտման և ո՛չ էլ չտրված ջրի համար: Ջրաչափերը հիմնականում կիրառվում են ջրատնտեսական մարմինների կողմից տրվող ջրի ելքի վրա: Իսկ երբ և որքան ջուր է ստանում տվյալ հողօգտագործողը՝ ոչ մեկին չի հետաքրքրում, այն դեպքում, երբ հանրապետությունում հողի արդյունավետ բերրիությունն ավելի շատ կախված է հողի ջերմա-ջրային ռեժիմից, քան նրա ֆիզիկաքիմիական հատկանիշներից [14, էջ 64]: Թեև ոռոգումն ունի տարբերակված նշանակություն տարբեր բնատնտեսական գոտիների համար, սակայն ոչ մեծ բացառություններով այն կարևոր է ողջ հանրապետության տարածքում: Այս հանգամանքները թելադրում են, որ ոռոգման համակարգի գործունեությունը պետք է կազմակերպվի այնպես, որ հողօգտագործողները կարողանան լավագույնս օգտագործել հանրապետության ջրային պաշարները:

Այսպիսով, պետք է նշել, որ Հայաստանի համար, որն ամեն դեպքում չի կարող սեփական արտադրության հաշվին ապահովել իր պարենային անվտանգությունը կարևորագույն մթերքների մի մասի գծով, գյուղատնտեսական նշանակության հողերի պահպանումը, հողօգտագործման արդյունավետությունը, ցան-

քատարածությունների օպտիմալ կառուցվածքի ապահովումը և այլն, պետական նշանակության խնդիրներ են՝ կապված թե՛ պարենային կայունության բարելավման, թե՛ պարենային անվտանգության հետ: Այս առումով հողօգտագործման ցածր արդյունավետությունը, գյուղացիական տնտեսությունների ճնշող մեծամասնության արտադրության ցածր ապրանքային ու էքստենսիվ վարման բնույթը խիստ մտահոգիչ հանգամանքներ են:

Եզրակացություններ

Գործնականում, պարեն արտահանող և ներկրող հիմնական երկրների դիրքորոշումները հակադիր են: Արտահանող երկրների պարագայում դրանք բխում են ոչ այնքան ընդհանուր շուկայական տնտեսության, որքան սեփական արտադրության շահերից: Միատարր չեն նաև խաղի կանոնները տարբեր միջազգային կազմակերպությունների, այդ թվում նաև ԱՀԿ շրջանակներում: Մեր պարագայում որոշիչն այստեղ երկրի շահերի ճիշտ ըմբռնումն ու պաշտպանությունն է:

Ցավոք, հանրապետության պարենային անվտանգության խնդիրների լուծման ընթացքը ներկայում դեռ անբավարար է: Բարելավման գործընթացն ունի բազմաթիվ ու տարաբնույթ բաղադրիչներ, որոնց շարքում ցանկանում ենք կարևորել երկրի ՀՆԱ և բնակչության անապահով շերտերի եկամուտների աճը՝ սպառողական գնողունակության բարձրացման առումով: Հասկանալի է, որ այս խնդիրների լուծման հանդուրժելի մակարդակը պահանջում է նպատակաուղղված ու երկարատև աշխատանք և զգալի ժամանակ: Քննարկված հարցերի շրջանակում, շեշտադրումը դնելով ագրարային քաղաքականության վարման վրա, այլ առաջնահերթ հարցերի թվում, մեր կարծիքով, պետք է ուշադրություն դարձնել նաև հետևյալին.

1. Հետևողականորեն իրականացնել ներքին և արտաքին շուկաների փաստացի արտադրանքի ու զարգացման միտումների մոնիտորինգ, որպեսզի ժամանա-

կին արձագանքել ագրարային քաղաքականության ներքին և արտաքին բաղադրիչները մշակելիս:

2. ՀՀ համար սննդամթերքների անհրաժեշտ անվանացանկի ավելցուկային արտադրություն ունեցող, առաջին հերթին՝ ԱՊՀ երկրների հետ, միջպետական պայմանագրեր կնքելիս հաշվի առնել անվտանգության նաև պարենային գործոնը, ինչը կարող է նպաստել երկրի երկարաժամկետ պարենային կայունությանը:
3. Տեղերում մշակել ոռոգման համակարգի գործունեության այնպիսի սկզբունքներ, որ հողօգտագործողներն անհրաժեշտ քանակությամբ և ճիշտ ժամկետներում ապահովված լինեն ջրով:
4. Աջակցել գյուղատնտեսական տարբեր տիպերի կոոպերատիվների և խոշոր հողօգտագործողների ստեղծման գործընթացին՝ ուղղակի և անուղղակի օժանդակության տնտեսական մեխանիզմների կիրառման միջոցով:

Աղբյուրներ և գրականություն

1. Римская декларация о мировой продовольственной безопастности, 13-17 ноября 1997г. http: // www. fao. org / wfs / homepage. htm.
2. 1999թ. Սիեթլում կայացած ԱՀԿ երկրների նախարարների կոնֆերանսի նախապատրաստած Ճապոնիայի տեղեկատվությունից. WT/GC/W/220 http://www.wto.org/wto/seattle/english/wtgcw-e/wtgcw-e.htm.
3. Գյուղատնտեսության ոչ առևտրական, բազմաֆունկցիոնալ ասպեկտները, ազդեցությունը գյուղատնտեսական քաղաքականության և բազմակողմանի առևտրի համակարգի վրա: Նորվեգիայի կողմից 02.06.98թ. նախապատրաստված փաստաթուղթը. http://www.landbruk.dep.no/landbruksdepartment/multifunctionality/html/environmental-effects-of-trad.html
4. *Գրիգորյան Կ., Սանասարյան Ա.*, Համաշխարհային պարենային իրավիճակը, գլոբալիզացիան և պարենային ազգային անվտանգությունը, «ՀՀ գյուղատնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները», Գյուղատնտեսության էկոնոմիկայի ԳՀ ինստիտուտ, գիտաժողովի նյութեր, Երևան, 2003, էջ 31-32:
5. *Боев В. Р., Румянцева Е.Е., Дадалко В. А.,* Продовольственная безопасность СНГ. Выбор альтернативы на пороге XXI века, Москва–Минск, 1998, стр. 86–88.
6. ՀՀ պարենային ապահովության քաղաքականություն, հաստատված 09. 09.99թ. արձ. # 47, էջ 56:
7. *Ավետիսյան Ս.,* Հայաստանի Հանրապետության ագրարային շուկայի ձևավորման հիմնախնդիրները անցումային տնտեսության պայմաններում, Երևան, 2002, էջ 226:
8. *Չախմախչյան Բ., Մանուկյան Մ., Մկրտչյան Հ.,* Պարենային շուկայի հիմնախնդիրները և զարգացման ուղիները ՀՀ-ում, Գյուղատնտեսության էկոնոմիկայի ԳՀԻ, Երևան, 2002, էջ 24:
9. *Ասատրյան Պ.,* Հիմնական սննդամթերքների սպառման մակարդակը ՀՀ-ում, Գյուղատնտեսության էկոնոմիկայի ԳՀԻ, գիտաժողովի նյութեր, Երևան, 1998, էջ 17-19:
10. ՀՀ վիճակագրական ծառայություն, Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի արդյունքները, Երևան, 2003, էջ 213:
11. ՀՀ վիճակագրական և մաքսային ծառայությունների տվյալներ, 2001թ.:
12. ՀՀ վիճակագրական ծառայության հաշվետվություններ 1998-2000թթ., 2002թ.:

13. *Ղազարյան Ս., Մկրտչյան Հ., Մկրտչյան Վ.,* Վարելահողերի օգտագործումը Հայաստանում. Վիճակը, հեռանկարները, Հողագիտության, Ագրոքիմիայի և Մելիորացիայի գիտական կենտրոն, գիտաժողովի նյութեր, Երևան, 2003, էջ 25-27:
14. *Ջավադյան Բ., Մկրտչյան Հ.,* Ոռոգման տնտեսական արդյունավետությունը տարբեր հողակլիմայական պայմաններում, Հայաստանի գյուղատնտեսության ամսագիր, 1972, # 4, էջ 62-69: